INGO

VTB

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԺԲԱԽՏՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ «STANDARD» ՓԱԹԵԹԻ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

«Standard» փաթեթը առողջության և դժբախտ պատահարներից ապահովագրություն է՝ նախատեսված ֆիզիկական անձանց համար, որը ներառում է կանխարգելիչ բուժվննում տարեկան մեկ անգամ և դժբախտ պատահարի հետևանքով ապահովագրված անձին պատճառված վնասների փոխհատուցում

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փ. 51, 53, Տարածքներ 47, 48, 50
Հեռ.՝ (+374 10) 59 21 21
Կայք՝ www.ingoarmenia.am

ԻՆՉԻՑ Է ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Ապահովագրական պատահարներ են համարվում դժբախտ պատահարի արդյունքում Ապահովագրված անձի կյանքին և առողջությանը պատճառված վնասներ, որոնք հանգեցնում են՝

- 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամության ձեռք բերման,
- ժամանակավոր անաշխատունակությանը,
- Մահվան:

Փաթեթը ներառում է նաև տարեկան կանխարգելիչ բուժվննում պայմանագրի գործողության ընթացքում մեկ անգամ «Մեդլայն կլինիկ» ԲԿ-ում հետևյալ ծածկույթով՝

- Թերապևտի (մանկաբույժի) խորհրդատվություն
- Արյան ընդհանուր հետազոտություն
- Որովայնի և կոնքի խոռոչի օրգանների սոնոգրաֆիա
- Գինեկոլոգի/ուրոլոգի խորհրդատվություն

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

500,000 ՀՀ դրամ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի 25.11.2020թ. թիվ 194 արձանագրությամբ հաստատված Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններում՝ այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ

- Ապահովագրված անձի ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ կապված դժբախտ պատահարի հետևանքով ապահովագրված անձի մահվան, հաշմանդամության, ժամանակավոր անաշխատունակություն ստանալու հետ:
- Ապահովագրության վկայագիր կարող է կնքել 18-75 (ներառյալ) տարեկան ցանկացած անձ:
- Ապահովագրված անձ կարող է հանդիսանալ Պայմանագրի կնքման պահին 0-ից մինչև 75 տարեկան ցանկացած ֆիզիկական անձ

ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Տարեկան 9,000 ՀՀ դրամ:

ՈՐՔԱՆ Է ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Հիատուցվող գումար չի նախատեսվում:

ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- Անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում վանգահարել «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի (+374 10) 59 21 21 շուրջօրյա հեռախոսահամարին և հայտնել պատահարի մասին,
- Կանխարգելիչ բուժվնման ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է կապ հաստատել «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի Զանգերի Կենտրոնի հետ (+374 10) 59 21 21 շուրջօրյա հեռախոսահամարին և հայտնել ծառայությունից օգտվելու մտադրության մասին հետագա սպասարկումը կազմակերպելու նպատակով:
- Տեղի ունեցած ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին անհապաղ հայտնել համապատասխան իրավասու մարմիններին (ՀՀ Ոստիկանություն, Բժշկական հաստատություն և այլն),

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ապահովագրական պատահարից հետո ոչ ուշ քան 60 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերության գրասենյակում լրացնել հայտային դիմումը կամ այն ուղարկել էլեկտրոնային եղանակով՝ ապահովագրական ընկերության մասնագետների կողմից տրամադրված կապի միջոցներով,
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 20 աշխատանքային օրվա ընթացքում,
- Հատուցման գումարը վճարվում է հատուցման որոշում կայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում, հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Ապահովագրված անձի միտումնավոր գործողությունների կամ այլ անձի կողմից կատարված գործողությունները, որը պայմանագրի շրջանակներում Ապահովագրված անձի մահվան դեպքում հանդիսանում է Շահառու:
- Հակաօրինական գործողությունների հետևանքով առաջացած վնասները:
- Ապահովագրված անձի ալկոհոլային թունավորումը, թմրադեղային կամ տոքսիկ թունավորումը և վերջիններիս հետևանքով առաջացած պատահարները:
- Ապահովագրական ընկերության պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: